ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմենֆարմ ՍՊԸ-ն ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	ՖԲ ՎԱՅՊՍ	ՖԲ ՎԱՅՊՍ	Ֆրանկլաբ	Ախտահանիչ անձեռոցիկներ, որոնք պարունակում են դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի (չորրորդային ամոնիումային միացություններ՝ ՉԱՄ)՝ և ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ (ՉԱՄ)՝ ինչպես նաև ՄԱՆ (մակերեսային ակտիվ նյութերի) համալիր, այլ օժանդակ և ֆունկցիոնալ բաղադրիչներ: Չի պարունակում սպիրտ, pH-ը 5.5-6,5: Հանդիսանում է որպես ախտահանիչ նյութ, օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ ներհիվանդանոցային վարակների), տուբերկուլոզի միկոբակտերիաների (թեստավորված Mycobacterium terrae-ի և M. avium-ի վրա), վիրուսների (մարդու համար ախտածին բոլոր հայտնի վիրուսների, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների (ներառյալ Ա, Բ և Ց

				հեպատիտները), ՄԻԱՎ, հերպեսի, պոլիոմիելիտի, ադենովիրուսների, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), գրիպի, այդ թվում «թռչնի» (H5N1) և «խոզի» (H1N1) և այլ), Կանդիդա, Տրիխոֆիտոն ցեղի սնկերի նկատմամբ, նաև օժտված լինի սպորասպան ակտիվությամբ (թեստավորված Bacillus subtilis, Clostridium difficile թեստ-շտամների վրա): Հակաբակտերիալ ազդեցությունը՝3րոպե: Հակավիրուսային ազդեցությունը՝ 5րոպե: Հակասնկային ազդեցությունը՝ 10 րոպե: Հակատուբերկուլյոզային ազդեցությունը՝15րոպե: Սպորոցիդ ազդեցությունը՝ 15րոպե: Փաթեթավորումը՝ անձեռոցիկները գործվածքային նյութից, են , ներծծված ախտահանիչ նյութով, ֆլոու-պակ փաթեթով, հերմետիկ փակվող կափարիչով: 1 փաթեթը (համարվում է 1 չափման միավոր) պարունակում է 100 անձեռոցիկ, 180 x 200 մմ չափով: Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի չբացված փաթեթավորմամբ 3 տարի է: Նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (մանկաբարձական, ատամնաբուժական կաբինետներում, տարբեր լաբորատորիաներում (կլինիկական, մանրէաբանական և այլ), շտապ օգնության կայաններում և այլն) փոքր մակերես ունեցող առարկաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, բժշկական սարքավորումների (այդ թվում՝ կուվեզներ), ՈՒՁՀ տվիչներ, օպտիկական սարքեր և այլն ախտահանման և մաքրման համար:Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս:

				Ունի որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական , ՀՀ ԱՆ կողմից հաստատված օգտագործման մեթոդական հրահանգ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Արմենֆարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2				